ՓՈՂՔ

ԹԻՒ 1149 — ՇԱԲԱԹ — 1877 ՓԵՏՐՎԱՐ 5

ԱԶԳԱՅԻՆ

Քաղաքական ու կրօնական ժողովներն միանալով երէկ՝ խառն նիստ մը ըրին։

1.– Իզմիրի գաւառական ընդհանուր ժողովոյ առաջնորդական ընտրութեան տեղեկագիրը նկատողութեան առնուեր, և օրինաւոր գտնուելով՝ վաւերացուեր է Գեր. Տ. Մելքիսեդեկ վարդապետի առաջնորդութիւնը։

2.– Ինչպէս անցեալ շաբթու կանխաւ գրած էինք, զինուորական տրոց համար Բ. Դրնէն Պատրիարքարան եկած վերջին ծանուցագրոյն վրայ գաւառները զրկուելիք շրջաբերականին ծրագիրը տեսեր, և որոշեր է տպագրութեամբ հաղորդել առաջնորդաց՝ Բ. Դրան ծանուցագրին պատճէնն ալ կցելով։

3.– Կտակաց հոգաբարձութիւնը վերակազմեր է. բայց չկրցանք իմանալ ընտրելոց անունները։

4.– Պատրիարքարանի ներքին բարեկարգութեան համար Տնտեսական խորհրդոյ կողմանէ մատուցեալ ծրագիրը՝ որ գլխաւորաբար դիւանատան գործատնութեանց համար առաւել բարեկարգ և կանոնաւոր եղանակ մը կտրամադրէ, բաւական խորհրդակցութեան նիւթ ընելէն յետոյ՝ որոշեր է առաջիկայ հինգշաբթի օրը յատկապէս նիստ ընել, ծրագրոյն վրայ վերջին որոշումն տալու համար։

5.– Ամուսնական նշանաւոր խնդիր (Սբվաճեան էֆէնտիի) մ՚ալ երէկ դարձեալ ժողովոյն դրաղման առարկայ եղեր, և վերջնական վճիռն արձակելու գործը յատուկ նստի մը թողուեր է, որ տեղի պիտի ունենայ ամսոյս 15ին երեքշաբթի օր։

Այս խնդրոյն համար արդէն կազմուած քանի մը յանձնաժողովոց, դատաստանական խորհրդոյ, և ի վերջոյ խառն ժողովոյ տեղեկագրերը երէկ ժողովոյն ներկայանալէն զատ՝ երկու կողմանց առարկութիւնք ալ լսուեցան։ Մեք զարմացանք, լսելով որ տակաւին խնդիրը լուծուած չէ, այսչափ երկար և բազմաժամանակեայ հետազօտութենէ յետոյ։

6.– Տիվրիկցի ազգայինք ալ երէկ ժողովին ներկայացեր էին, իրենց կտակի և Վագրշի հաշուոց խնդրոյն կարգադրութեան համար։ Ժողովը պատասխաներ է, թէ հաշուոց քննութեան գործը արդէն յանձնուած է Տնտեսական խորհրդոյն, և թէ՝ կպարտաւորին սպասել քննութեան արդեանց։ Տիվրիկցիք դոհ չըլլալով՝ թախանձանօք խնդրեր են, որ ապահովութեան ներքև առնուի կալուածական մատակարարութիւնը. և ժողովն՝ այս պահանջման վրայ՝ որոշեր է յանձնարարել Տնտեսական խորհրդոյն, որ՝ եթէ վտանգ մը կնշմարուի ստուգիւ, փութայ ապահովութեան միջոցներ ձեռք առնուլ։ Տիվրիկցիք մեկներ են՝ համոզուելով թէ՝ սոյն որոշման, և թէ՝ Տնտեսական խորհրդոյ կողմանէ տրուած խոստմանց վրայ։

—

Երէկ դիշեր՝ ինչպէս կանխաւ ծանուցած էինք, ի նպաստ Հիւանդանոցի պարահանդէսը տրուեցաւ, ի ներկայութեան այլ և այլ ազգէ բաղմախուռն հանդիսականաց։ Հանդէսը խիստ շքեղ ու բարեկարգ անցաւ, շնորհիւ ջանից և կարգադրութեանց մեծապատիւ յանձնաժողովոյ։

Մեծաւ ուրախութեամբ կիմանամք, թէ ծախքը ելնելէն յետոյ՝ 400 լիրայի չափ զուտ հասոյթ կմնայ ի նպաստ յիշեալ ազգային պատսպարանին։

Այսպիսի ժամանակի մը մէջ, այսչափ յաջողութիւն՝ արդարև մեծ բան է, և անձնուէր յանձնաժողովը ազգովին շնորհակալեաց արժանի է։

—

Տրապիզոնի կողման անցից պատճառաւ խափանեալ ազգային լրագրաց վերստին հրատարակութեան համար՝ այսօր հրաման պիտի տրուի լրագրական վերատեսչութեան կողմանէ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Յայտնի է թէ անցեալ տարւոյ դեկտեմբերի մէկին Վանայ մէջ պատահած սոսկալի հրդեհն ի՛նչ աստիճան աղետաբեր եղաւ տեղւոյն հայ ժողովրդեան՝ նիւթական և բարոյական մեծամեծ վնասուց ենթարկելով զանոնք. մինչեւ անգամ եկեղեցեաց և դպրոցաց դռներն գոցուած են այսօր, և Վանայ հասարակութեան ներկայն և ապագայն յուսաբեկ թշուառութեան մէջ ինկած, այնպէս որ եթէ ազգովին օգնութիւն չհասնի, հետեւանքն անդարմանելի է։

Կեդր. Վարչութիւնն իրաց այս ողբալի վիճակին ճշդութիւնը պաշտօնական կերպիւ ստուգելով, բարեխնամ կառավարութեան վերաբերեալ տնօրէնութեանց գործադրութեանը համար արժան եղած ջանքն ընելէ ետեւ, այս անգամ որոշեց հանգանակութիւն մը բանալ մայրաքաղաքիս մէջ, օգնութեան Մասնաժողով մը կազմելով հինգ անդամներէ բաղկացեալ, որք են՝

Սիմոն պէյ Մաքսուտեան
Յակոբ էֆէնտի Նորատունկեան
Յակոբ » Քազազեան
Յովհաննէս » Էսաեան
Միքայէլ » Յակոբեան

և նախագահ կարգելով Ամեն. Տ. Խրիմեան Սրբազանը։

Սոյն Մասնաժողովոյ պաշտօնը պիտի ըլլայ հանգանակութիւնն արդիւնաւորել, գոյացած արդիւնքը գանձել և զայն իւր նպատակին հասցնելու համար պէտք եղած միջոցները խորհրդակցութեամբ տնօրինել ըստ արժանւոյն։

Արդ՝ Կեդր. Վարչութեան սոյն որոշումը հարկ դատուեցաւ ներկայիս հրատարակել ի գիտութիւն ազգայնոց, և հրաւիրել բոլոր բարեսիրտ ազգայինքն՝ որ իրենց ողորմութեան կամաւոր տուրքը չզլանան յօգնութիւն վաստպուրականի հրկիզելոց, և իրենց նպաստներն փութան յանձնել մի միայն վերոյիշեալ Մասնաժողովոյ անդամոց, որոց յատկացած է գանձել նուիրատուութեան գումարներն արձանագրելով յատուկ ժապաւինեալ տումարի մը մէջ, որ վաւերացեալ է Պատրիարքարանէն։

2 Փետրվար 1877։

Էյուպէն հետեւեալ նամակը գրած է մեզ՝ բաղիշեցի ազգային մը։

. . . Խմբագիր

Ամեն անհատ՝ որ ազգիս յառաջդիմութեան բարեկամ և նորա բարոյական ու նիւթական զարգացման ջերմ փափագողներէն է, չկրնար ցաւ ի սիրտ չողբալ իւր ազգի յետադիմութիւնը և օր ըստ օրէ ի խոր թշուառութիւն գահավիժելն։ Մենք երկու թշնամիներ ունինք. մէկը քան զմիւսն զօրաւոր և աւերիչ, որք միաբան մեր նիւթական և բարոյական կեանքը կսպաննեն, մին՝ հարստահարութիւն, զրկանք. միւսն՝ անհոգութիւն և անտարբերութիւն։ Այս երկու թշնամեաց հարուածին տակ քանի մը տարիէ ի վեր կհեծեն բաղիշոյ ազգայինք ալ. բայց տակաւին չեն սթափիր, և չեն կրնար թօթափել այն ժանտ լուծը, որ դաշնակից ունի իրեն՝ տգիտութիւն և ստրուկ թշուառութիւն։ Զգենք առայժմ հարստահարութեան և զրկանաց խնդիրը, որոյ կեանքը տեւական չկրնար լինիլ բնականաբար։ Խօսինք անա՛նկ խնդրոյ մը վերայ, որ ներքին և մեզ մերձաւոր լինելով, և զոր ի մեզ սնուցանելու գլխաւոր առիթ և ծնունդ մենք կարտադրեմք առանց ուրիշի մը միջամտութեան. այն է անհոգութիւն և անտարբերութիւն. որոց ենթակայն եթէ երկրագործ մի է, իւր ագարակաց մշակութեան անփոյթ լինելով՝ ամեռը դատարկ պէտի գտնէ իւր ամբարը, և իւր զաւակունքը՝ հացակարօտ։ Եթէ տանուտէր մի է, և իւր գերդաստանի այդուսոյն բարոյական մշակ մը, բայց նորա մշակութեան օդտակար և կարևոր քիրտ և խնամք կզլանայ, եթէ միով բանիւ, հայր մի է և իւր որդեկաց դաստիարակութեան, յառաջդիմութեան և լուսաւորութեան անհոգ և անտարբեր կդտնուի, կենաց աշուն զանոնք ապարդիւն և փշալիր մացառ մը պիտի ներկայացունէ։

Բաղէշ կրնայ դաստիարակութեան ոյսը առ ինքն հրաւիրել և մեր ազգայնոց սիրտն ու ոգին նորա բարոյական հրով և ջրով մկրտել. կսիրէ նա ուսումը, կսիրէ գիտութիւնը, բայց անհոգ և անտարբեր է զայն հաստատամիտ ոգւով և յարատևութեամբ արդիւնաւորելու միջոցները դտնել։ Անհերքելի ճշմարտութիւն մի է այսօր, որ դաստիա-

բակութեան լուսատու լապտերի լուցկին՝ դրամն է ; առանց որոյ՝ այս լապտերն լոյս չունի։ Բայց եթէ առարկէ մէկն, թէ Բաղշոյ ներկայ երկսեռ մանկուոյն դաստիարակութեան լուցկին որ դրամն է, ո՛ւսկէ պիտի գոյանայ և ի՞նչ նպատակի պիտի ծառայէ, կը պատասխանեմ։ Բաղէշ եօթն թաղերէ և չորս եկեղեցիներէ բաղկացեալ քաղաք մ՚է, որ կը պարունակէ իւր մէջ 5000 բնակիչ որոյ 1000ն աղքատ, 500ը՝ անգործ, և 500ը ի դուրս գործով զբաղեալ կամ գաղթական՝ զեղչելով կմնան 3000 անձինք, որք եթէ շաբաթական 10 փարայ բաժանորդագին վճարեն, շաբաթ 750 ամիսն 3000 և տարին 36000 դահեկանի հասոյթ մը կգոյանայ. արդիւնք մը որ կրնայ—քաղաքին դրից նկատմամբ—կեդրոնական ուսումնարան մը կառուցանել, և օգտակար լեզուներով և ուսմամբք հրահանդել հայկազուն մանկտին, յորոց զուրկ է Բաղշոյ՝ ինչպէս անցեալ, նոյն և ներկայ սերունդ։

Այսպիսի ընկերութեան կարևորութիւն առաջարկուած է խոհուն հայրենասէրներէ հանուր ազգիս նկատմամբ, և որոյ 2 միլիոն անհատներով (զեղչմամբ) ամիս 2 միլիոն ղրչի դումարի մը գոյանալը։ Թերևս այս ամենակարևոր ձեռնարկը՝ առ այժմ ընդհանուր ազգի մը նկատմամբ քիչ մը դժուարութիւններ ունենայ, տեղւոյ, դրից և հեռաւորութեան պատճառաւ. բայց այսպէս չկրնար լինել փոքրիկ քաղաքի մը համար, որ շրջանակաձև լերան մը ծոցը կառուցեալ դիրք մը ունի, և որոյ բնակիչք՝ չորս իրերամերձ եկեղեցեաց ծոցը կգումարին, և որոց ամէնը իրերածանօթ՝ մի ընտանեկան մարմին կկազմեն։

Գալով վանաց վիճակին, կասեմ, — արդէն վանքերը՝ ըստ բառական նշանակութեան՝ հիմնեալ են յերանելի նախնեաց մերոց ի պատսպարան տկար և անկարող մերազնէից և ի վարժոց հայորդոյն։

Բաղէշ ունի չորս վանք, ցարդ անասուն բտելու միայն յատկացեալ. մինչդեռ իւրեանց անձնիւր թեմերով և յատուկ եկամուտներով կրնան գիշերօթիկ դպրոցներ բանալ (թէպէտ ցարդ ցերեկօթիկն ևս չունին) ի դրացի գիւղօրէից և ի քաղաքէ իսկ ընտրանօք անոք և անպատսպար տղայք հաւաքելով, մատակարարել նոցա բարոյական և մտաւորական սնունդ. բայց դժբաղդաբար ոչ ժողովուրդ, և ո՛չ նոյն սրբավայրաց վանահարք չունեցան կանխաւ փոյթ նախապատրաստութեան առ այն, հակառակ ոգւոյն և նպատակաց լուսատարած նախնեաց մերոց։ Այսպէս են այժմ վանորայք Բաղշոյ։ Մենք չենք պահանջեր ի սոցանէ Արմաշու վանաց գիշերօթիկ դպրոցի յառաջդիմութիւն ի հայ դրականութիւն ի գաղղիական լեզու և յայլ օգտակար ուսմունս, զորս աչօք տեսի, և որք դեր. խորէն սրբազան վանահօր և պատուարժ. միաբանութեան ջանից արդիւնք են. և ոչ Երուսաղէմի և Արարատեան Մայր Աթոռոյ ճեմարանաց արդիւնք և յառաջդիմութիւնք, որք մեծաշէն գործք և մեծածախ և ձեռնարկութիւնք լինելով, մեծամեծ օգուտներ պէտք են արտադրել։ Բաւ և շատ էր, եթէ միայն հայ լեզուի և հայ դրականութեան մշակները յառաջ բերէին յիշեալ վանօրայք, որով միայն նոցա հիմնադրաց իղձք յագուրդ կառնուն։

Շատեր՝ շատ անգամ արտունչներ կըտեղան կղերաց տգիտութեան և իրենց սուրբ կոչման անարժանութեան նկատմամբ, թէ ո՛րը գրել, կարդալ չգիտէ, որը վանաց վանահայր կամ քարոզիչ վարդապետ լինելով՝ քանի մի վայրկեան ժողովրդեան մխիթարութեան խօսքեր խօսելու, քարոզելու չափ հմտութիւն չունի հին և նոր կտակարանաց վարդապետութեանց ևն ևն։

Ի՞նչ իրաւամբ կպահանջեն այս ամէնը անոնցմէ, մինչդեռ ժողովուրդ իւր եկեղեցւոյ և վանաց անշքութիւն բերող այս ամուլ վիճակը կ՚դիտէ և կզդայ, տակաւին կ՚դուլայ նոցա փառքը բարձրացնելու միջոցները դործադրել, որ միայն դպրոցներով կլինի։ Տակաւին ապո՛ւշ ապո՛ւշ կսպասէ, որպէսզի անգամ մի ևս Սիոնի Պէնտէկոստեան դպրոցէն հոդւով սրբով դաստիարակեալ Առաքեալք դան, իրենց դարաւոր խաւարը փարատեն, չգիտնալով թէ այս հրաշից դարն ևս անցեր է. միայն պէտք է այժմ նոցա ոգւով և ողջամիտ վարդապետութեամբ կրթել նոր սերունդ, որ լինին նոքա օր մի ապագային առաքեալներ, թարգմանիչներ, և անձնուէր դաստիարակներ Հայաստանեայց ազատ եկեղեցւոյն և տարագիր և ցրուեալ Հօտին։

Ոմանք՝ պիտի առարկեն, թէ՝ վանքերն անկարող են դիշերօթ դպրոցներ բանալ և այնու եկեղեցւոյ և ազգի պաշտօնեաներ հասցնել. կասեմ. — եթէ բարոք և հաւատարիմ հսկողութեամբ և տնտեսութեամբ մատակարարուին արդէն եղած և յատկապէս այս նպատակին համար ջերմեռանդ և ազգասէր ժողովրդեան շռայլած արդիւնք և նուէրք, պիտի կրնանք յիշեալ քաղաքի վանօրէից ծոցը արդիւնաբեր դպրոցներ տեսնել։ Զգելով զայս, հայրենակցաց իյուշ բերելու համար պիտի կըրկնեմ 1872 թուականին Հայրենիք լրագրոյ մէջ հրատարակեալ այն յօդուածս, զոր Մշոյ Ս. Յովհաննու մեծահարուստ վանաց կողպատումը հարկադրեց զիս գրել. բայց ոմանք պարզամիտք՝ յայնժամ այլ ընդ այլոյ մեկնութեամբք անպատշաճ դատեցին այն յօդուածին իրաւացի դիտողութիւնք, որ կարամադրէր վանաց և եկեղեցեաց աւելորդ ոսկեայ և արծաթեայ անօթները, դրամի, անշարժ կալուածի և ուրիշ ապահով վստահութեան արժանի շահուց և պիտոյից վերածելով, նոցին արդեամբք աղքատաց իրաց ձեռնարկել, դաստիարակութիւն ընդհանրացնել, գիւղացին կրթել, դաստիարակեալ մարք և ծնողք պատրաստել, զորս ո՛չ դող կդողնայ, և ո՛չ ցեց կապականէ։ Կ՚յուսամ որ Խընդրակատար վանաց նմանօրինակ դէպքը, յայս նուազ ազգու դաս մը տայ ամէն անոնց, որք յայնժամ չուղեցին լուրջ և խոհուն կերպով խորհիլ և իրաց խորը թափանցել։ Ո՛վ կրնայ այսօր ասել թէ աղէկ չէր լիներ Մշոյ Ս. Յ. Վանաց բաղմաթիւ կորուստով՝ Խնդրակատարի վանքը փորձառու լինելով, 8000 լիրայի արժողութեամբ ոսկեղէն և արծաթեղէն անօթք աւարակաց կերը և որս չտար։

Այս վանքը՝ ինչպէս իւր դիթասրտութեան վերայ վստահ է ամէն մարդ, աւելի դոհ կ՚լիներ յիւր անուն նուիրեալ անօթները՝ իւր քաղցեալ և բաղմադիմի կարօտեալ սովամահ զաւակաց բարոյական սննդեան ղոհել, որուն մէջ աւելի կ՚փայլի իւր ճշմարիտ փառք և սրբութիւն, քան աւազակաց, որք իրենց հատու ղէնքերը և հրացաններուն թիւը ստուարացնելու պիտի գործածեն նոյն սրբազան անօթոց արդիւնքը ի խողխողումն պաշտօնէից և որդւոց նոյն եկեղեցեաց և վանաց։

Անշուշտ եմ, որ Խնդրակատարն փորձառու էր, և այս անգամ քաջ փորձեցաւ, բայց նախապաշարմունք, անիծեալ տգիտութիւն դեռ կճգնի իւր յամառ փորձն փորձել... գոգցես ճակատագրեալ եմք, որոշ որոշ փորձ առնուլ ի կործանումն մեր՝ և յանշքութիւն մեր նիւթական և բարոյական տաճարաց և վանական ճշմարիտ փառաց։ Ուստի՝ չը յուսալով որ այլ ևս Բաղշոյ փորձառու ժողովուրդ իւր ցարդ ըրած շատ մը փորձից շարքին վերայ յաւելցնէ նաև միւս վանաց և եկեղեցեաց արդի առձեռն դտնուած աւելորդ անօթները պահելու աղդալոս և անարդարանալի փորձն, այլ ընդհակառակն ուշաբերելով պիտի խորհի զայնս յօդուտ Ազգիս նոյն վանաց ծոցը բացուելիք դպրոցաց մանկանց դործածել, որ կրնայ համապատասխանել նոյն անօթոց բարեպաշտ յիշատակատեարց ոգւոյն և նուիրական բաղձանաց։ Եթէ անլսելի մնան այս տողեր և վրիպին դործունեայ բանագէտ ժողովոց և խորհրդոց ուշադրութենէն, օր մի ևս միւս վանաց և եկեղեցեաց յափշտակութեան և կողոպտման ցաւալի լուրը պիտի հրատարակեն լրագիրք։ Յայնժամ անաչառ և հեռատես յօդուածագրաց արդարացի դիտողութեանց, և ի նոյն սրբավայրս դաստիարակուող Հայ մանկտւոյն բարոյական մահուան և անդաստիարակ վիճակէն յառաջ դալիք տխուր հետեւանաց պատասխանատու պիտի մնան ամէն անոնք, որք յիմար դաղափարներով և վերացական նախապաշարմամբ դրական լուսոյ և վճիտ ճշմարտութեան դէմ խոչ և խափան յարուցին և դեռ կյարուցանեն.

ԲԱՐՍԵՂ Վ. ՀԱՅԿՈՒՆԻ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Զինուորական ու քաղաքական պաշտօնատարաց՝ մէկ մէկ ամսական պիտի տրուի այսօր կամ վաղը։

— Արդադրութեան համար թէվֆիդ էֆէնտիի հնարած մեքենան քընուեր ընդունուեր, և հեղինակին աստիճանը բարձրացուներ և օգոստափառ Սուլթանին կողմանէ պարդև տալ որոշուեր է։

— Պուլդարիոյ անցից ժամանակ հըրդեհեալ դիւղօրէից շինութեան համար՝ կառավարութեան կողմանէ ամէն խընամ և հոգ բլլալէն զատ, յիշեալ դիւ-

զօրէից մէջ բնակեալ 40 քահանայից և 40 խմամիներու ալ 150 ական ղրուշ ամսական կապուեր է ։

— Լոնտոնի մէջ շինուած և մայրաքաղաքս բերուելու վրայ եղող Մէմտուհիյէ զրահաւորին անունը Համիտիյէ դրուեր է, յանուն օգոստափառ Սուլթանին ։ Գըտնըուած զրահաւորաց ամենէն մեծն է ։

— Բ. Դրնէն Վատիկանի (Հռոմայ Պապին) ալ ծանուցուեր է, թէ Միտհաթ փաշայի պաշտօնանկութիւնն՝ Բ. Դրան և Վատիկանի մէջ եղած բարեկամական յարաբերութեան մասին ո՛րևէ փոփոխութեան պատճառ չպիտի ըլլայ ։

—Եանեայի, Դանուբի, Այտընի, Սէլանիկի, Պօսնայի, Սըվազի, Էրզրումի, Էտիրնէի և Իշգոտրայի կուսակալութեանց վիճակներէն ուղուած երեսփոխանաց ընտրութիւնք կատարուեր են, և ընտրեալք մօտ ատենէն յառաջ մայրաքաղաքս կհասնին ։

—Անգլիոյ խորհրդարանին մէջ ալ հարցուեր է՝ Միտհաթ փաշայի պաշտօնանկութեան ու հեռացման պատճառը. և արտաքին գործոց նախարարութեան կողմանէ պատասխան տրուեր է, թէ՝ պաշտօնանկութեան պատճառներուն վրայ տեղեկութիւն առնուած չէ, սակայն ի պաշտօնէ ծանուցուած է Անգլիոյ թէ նորա անկմամբն որ և է փոփոխութիւն չպիտի ըլլայ Թուրքիոյ քաղաքականութեան մէջ, և թէ՝ հրատարակեալ բարեկարգութիւնք պիտի գործադրուին ։

Եւրոպական լրագիրք բաւական զբաղեալ են՝ Միտհաթ փաշայի պաշտօնանկութեան խնդրով ։ Մէկ մասը՝ մինչև երկինք, և միւս մասը մինչև դժոխք կիջեցունեն զանի ։ Մէկ մասը՝ հրատարակեալ բարեկարգութիւններն բոլորովին նորա հեղինակութեան կվերագրեն և օրէնսդիր ու բարեկարգիչ Թուրքիոյ կանուանեն. իսկ միւս մասը՝ Թուրքիոյ մէջ գործուած ամեն չարեաց և մանաւորապէս Պուլղարիոյ անցից իբրև հեղինակ և տնօրէն կմատահամբաւեն ։

Միտհաթ փաշա՝ կըսէ վերջին հեռագիր մը, Պրէնտիզիէն Նաբոլի գնաց և հոն պիտի հաստատէ իւր բնակութիւնը։

Գրած էինք, թէ Միտհաթ փաշայի ապարանաց Խիամ Սըտգի էֆէնտի, և Շուրայի-տէվլէթի անդամներէն Քէմալ պէյ բռնուած ու հարցաքննութեան ենթարկուած են ։ Ի վերջոյ իմացանք, թէ ասոնցմէ զատ, նախորդ Սուլթան Մուրատայ սենեկապետներէն Շէվքէթ պէյը, և Գէպզէէն Քէմալ պէյի մէկտեղ բերած Միւլազիմ Սիւլէյման էֆէնտի ալ ձերբակալեալ են և հարցաքննութեան ենթարկուած ։ Հարցաքննիչք են՝ Տիվանը-ճինհայի նախագահ Բէշատ պէյ և ոստիկանութեան գլխաւոր քննիչներէն Զիա պէյ, և օրը 5-6 ժամ հարցաքննութիւն կըլլայ ։

— Սթանպուլ կըսէ՝ թէ Բ. Դրան և Գարատաղի մէջ հաշտութեան բանակցութիւնն սկսած է, կանխաւ Բ. Դրան կողմանէ խօսք տրուած ըլլալով որ նաւահանգիստ մը տրուի Գարատաղի ։

Եւրոպական լրագիրք մանրերնուն փաթթած են՝ Սերվիոյ և Գարատաղի հետ Բ. Դրան ուղղակի սկսած բանակցութեան խնդիրն ալ. ոմանք կպնդեն թէ համաձայնութիւն չպիտի գոյանայ. այլք ընդհակառակն այժմէն իբրև վերջացեալ կհամարին ։ Իսկ ռուսական ջերմեռանդ լրագիրք կաղաղակեն, թէ Արևելեան խնդիրն այդչափով չվերջանար, եթէ երբէք Սերվիա և Գարատաղ համաձայնին. այլ՝ բուն խնդիրը կմնայ, այն է Պուլղարիա և Հէրսէք ու Պօսնա ։ Սերվիոյ ազգային ժողովն ալ մօտերս կը բացուի. տեսնենք սա՛ ինչ պիտի ծնի ։

— Հէրսէքի մէջ վերջին օրերս դարձեալ տեսնուած ապստամբական շարժումներն, ըստ պաշտօնական տեղեկութեանց, զսպուեր են անմիջապէս ։

Երրորդ աստիճանի Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ՝ Եգիպտոսի իշխանութեան կողմանէ Պօլսոյ փաստաբան Գասթրօ պէյի ։

— Ծխախոտի մաքսատան վերատեսչութիւնը՝ Պօլսոյ ծխախոտի ջնջեալ մենավաճառութեան նախորդ վերատեսուչ Սիւլէյման Սէրմէտ պէյի յանձնուեցաւ։

— Երկրորդ աստիճանի երկրորդ կարգի պաշտօնատարութիւն տրուեցաւ՝ Ուշագի առևտրական դատարանին նախագահ Հաճի Ասիմ էֆէնտիի ։

—Երրորդ աստիճանի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ՝ Պրուսայի մէքթուպճի Հագդը պէյի, և երկրորդ աստիճանի պաշտօնատարութիւն՝ կուսակալին քարտուղար Ֆէհմի էֆէնտիի ։

— Կայսերական դիւանին (րէսամխանէ) տնօրէն Գօմպարտի էֆէնտիի՝ երկրորդ աստիճանի Միւթէմայիզի պաշտօնատարութիւն տրուեցաւ ։

— Պէհքէի կառավարիչ կարգեցաւ՝ Սղէրդի նախկին կառավարիչ Ճէմիլ փաշա ։

Ցէմիթօքայէն (Եանինէի կուսակալութեան ներքև) կգրեն ։ — «Շաբաթի մը չափ գիշեր ու ցերեկ փոթորկով անընդհատ եկած ձիւնը շուկաներուն ու թաղերուն մէջ՝ մէկ կանգուն, և տեղ տեղ քանի մը մարդաչափ բարձրացած ըլլալով՝ 15 օրէ հետէ ո՛չ գիւղաքաղաքէս գիւղերը և ո՛չ գիւղերէն գիւղաքաղաքս ո՛չ ոք երթևեկած չէ ։ Աստի 6 ժամ հեռի եղող Ցէրպէնտ-Սաղիր գիւղէն երեք աւուր մէջ մեծ դժուարութեամբ եկող երկու գիւղացիներէ իմացուած է, որ այն կողմերն ալ շատ ձիւն եկեր է, և թէ՝ քանի մը գիւղերու խըրճիթներն ու փարախներն ձեան տակ մընացեր են, բայց բարեբաղդաբար մարդոյ վնաս չէ եղեր ։ Ջեան չեղջեկուտէն գիւղին մէջ ճամբայ բանալ անկարելի ըլլալով՝ ձեան տակէն կամարներ շիներ և այնպէս երթևեկեր են ։ Կառավարութիւնը արմուք ղրկեց գիւղաքաղաքս յօգնութիւն կարօտելոց, որոց ոմանք անօթութենէ մեռնելու վիճակի մէջ էին. և մարդիկ հանեց ճամբաները բանալու փայտ բերելու համար ։ Վաճառականներէն Մ. Մարտիրոս աղայի տունը փլաւ, բայց երբէք վնաս մը չեղաւ իրենց և անանց ։ Ծերունիք կպատմեն, թէ 80 տարիէ ի վեր այսպիսի ձմեռ եղած չէ այն կողմը» ։

— Զօրեքշաբթի առաւօտ ժամը կէսին ատենները Ղալաթիա Սանտըգճըլար բռուած թաղը համբաւաւոր կանանց որջին եղող փողոցին հրդեհ պատահելով 24 տուն, 14 խանութ և 1 պանդոկ այրեցան ։

Այս հրդեհին մէջ մէկ երկու հոգի այրեր մեռեր են ։

Պատ մ՛ալ փլչելով Թէրսանէի ջրհանակիրներուն պետ Ակեահ էֆէնտիի գլուխը վիրաւորուեր և տունը փոխադրուեր է։ Թեթև կերպիւ վիրաւորուեր է նաև հրշէջներուն գնդին հրամանատար կոմսն ալ ։

—Կայսերական բժշկական վարժարանին ընթացքն աւարտած, և փարիզ ղրկուելով հոն ալ կառավարութեան ծախուք բժշկական արուեստը կատարելագործած, Ավրամ անուն հրեայ երիտասարդ մը փարիզ մնալով կայսերական զօրաց ծառայել չուզելուն համար, որոշուեր է՝ Պօլսոյ վարժարանին ծախքը (28798), և փարիզի ծախքը հօրմէն առնուլ որ Ագսարայ բժշկութիւն կընէ եղեր ։

— Անգղիացի երևելի փաստաբան մը՝ Նասմայթք՝ քանի մ՛օր յառաջ Պէյօղլու իւր տանը մէջ խեղդեցեր, և ինքզինքը ատրճանակով սպաններ է։

Լուր կայ, թէ Պալթիկ ծովը բացուելուն պէս, ռուսական մեծ նաւատորմիղ մը Քրօնշթատէն պիտի ելնէ և միջերկրական ծովը պիտի գայ։

Նաև կըսուի, թէ Ռուսիոյ կայսեր եղբայր Կոստանդին արքիդուքսը յատուկ պաշտօնով մը Եւրոպա ուղևորած է։

Ռուսիոյ հարաւային բանակին վրայ ալ այս օրերս այլևայլ զրոյցներ կան. ոմանք այնպէս կցուցնեն թէ յարձակման վիճակի մէջ դրուած է. այլոց նայելով՝ այդ բանակը հետզհետէ կնուազեցունէ կառավարութիւնը, և ներկայութիւնը չէ թէ պատերազմի այլ Բ. Դրան երկիւղ տալու համար է ։

Մեք կկարծեմք, թէ ի՛նչ բանի համար եղած ըլլալն տեսնելու համար, պէտք է իմանալ եւրոպական կառավարութեանց կողմանէ Կորչագօֆեան վերջին շրջաբերականին տրուելիք պատասխանը և անգլիական խորհրդարանին վիճաբանութեանց վերջնական արդիւնքը ։ Յայտնի է, թէ Կորչագօֆ այդ շրջաբերականով ուզած է գիտնալ եւրոպական տէրութեանց դիտաւորութիւնն Արևելեան խնդրոյն համար, դեսպանաժողովոյ առաջարկութեանց մերժմանէն յետոյ ։

— Սերվիոյ և Գարատաղի պատերազմաց մէջ քաջ և երևելի հանդիսացող 150ի չափ Սլաւաց պատկերներն՝ Բեդերսպուրկի մէջ ի տես հասարակաց դրըուեր են, և տղաքներէ՝ 10, ու մեծերէ՝ 30 փրդ տեսնողչէք կ'առնուի եղեր ։

— Զվիցերիի շատ կողմերը գետեր յորդեր են ։

— Լոնտոնէն եկած վերջին հեռագիրները կծանուցանեն, թէ խորհրդարանին մէջ ընդդիմադիր մասը նկուն եղած է ։ Կառավարութիւնը յաղթական կհանդիսանայ, և Արևելեան խնդրոյն մէջ բռնած ընթացքը իբրև գոհացուցիչ և օրինաւոր կընդունուի ։

— Լսած էինք, թէ երկինքէն գորտ, մարախ, և այլն թափած է. բայց օձ

թափիլը լսուած չէր։ Այս անդամ ամերիկեան լրագիրք հրատարակեր են, թէ Ամերիկայի Մէմֆիս անուն քաղաքին մէջ քանի մը օր շարունակ միլիոնաւոր օձ թափեր են երկինքէն։ Քաղաքին մէջ գտնուող և տարիքն 100 ը անցած ալևոր մը զարմանօք ըսեր է, թէ այսպիսի բան մը ո՛չ ինքը տեսած է, և ո՛չ իւր ծնողքէն լսած է,

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Ասաքիրի շահանէ էլպիսէ անպարբնա պէհեր հաֆթա եիւզէր պին ատէտի թէսլիմ օլունարագ իքի պուչուգ մահտէ արգասը ալընմագ վէ էսմանը թէսլիմինի միւպէյյին վերիլէճէք օլան մագպուզ սէնէտինին վիրուտինտէ պէր վէճհի փէշին սիմ մէճիտիյէ երիմի ղըրուշա վէ մէճիտիյէ վերիլմէզսէ ֆարգըյըլա գայիմէ օլարագ նիզամիյէ խազինէսինտէն վերիլմէք իւզերէ մուպայեա օլունաճագ պիր միլիոն ատէտ տէօքմէտէն մամուլ սիվարի վէ թօփճույա մախսուս տիւյմէնին պէհեր ատէտի պէշ պուչուգ փարայա օլարագ թալիպի էօհտէսինտէ օլուպ, իշ պու շուպաթը բումինին սէքիզինճի սալը կիւնիւ գարարը գաթիսի վերիլէճէյինտէն իթա իթմէյէ թալիպ օլանլարըն եէվմի մեզքիւրտէ տարը շուրայի ասքերիյէ կէլմէլերի։

Պապը Սէրասքէրի

3 Շուպաթ 1877

—

Նանը աղիզ իտարէսինին գաֆանը տագիդ վէ Գասըմ փաշա տէկիրմէնլէրինտէ ֆիրուխթ օլունմագ իւզրէ մէվճուտ պուլունան իւզ պին գըյէ քէփէք օն կիւն զարֆընտա էսմանը եիւզիւք գայիմէ իւզ զրուշա օլարագ փէշինէն վիրիլէրէք ախշ օլունմագ շարթը իլէ պէհեր գըյէսի իկիրմի փարայա թալիպի էօհտէսինտէ օլուպ շուպաթը բումինին պէշինճի ճիւմա իրթէսի կիւնի գարարը գաթիսի վերիլէրէք ֆիրուխթ օլունաճաղընտան իշթիրա իթմէկէ թալիպ օլանլարըն եէվմը մեզքիւրտէ տարը շուրայի ասքերիյէ կէլմէլերի։

1877 շուպաթ 2

Պապը Սէրասքէրի

—

Գէյդօզ տապախխանէսի իչուն միւպայեա օլունաճագ իգի պին ատէտ թուղը գուրը անատօլու կէօնի թարիխը գօնթրաթօտա հէման թէսլիմ օլունմագ վէ էսմանը թարիխը թէսլիմինտէն իթիպարէն օթուզ պիր կիւն զարֆընտա սիմ մէճիտիյէ իկիրմի ղրուշա վէ սիմ մէճիտիյէ վիրիլմէսի սուրէթտէ փիյասա ֆիյաթը իլէ ֆարգը պիլ հիսապ գայիմէ օլարագ տապախխանէի մեզքիւրտէն վիրիլմէք շարթը իլէ պէհեր գըյէսի օն իքի ղրուշա թալիպի էօհտէսինտէ օլուպ շուպաթը բումինին եէտինճի փաղար իրթէսի կիւնի գարարը գաթիսի վիրիլէճէկինտէն իթա իթմէկէ թալիպ օլանլարըն եէվմը մեզքիւրտէ տարը շուրայի ասքերիյէ կէլմէլերի։

1877 շուպաթ 2

Պապը Սէրասքէրի

—

Ասաքիրի շահանէ էլպիսէ անպարբնա պիր պուչուգ մահ նիհայէթինէ գատար թէսլիմ օլունմագ վէ պէհասը մագպուզ սէնէտի վիրուտինտէ սիմ մէճիտիյէ երիմի ղուրուշա օլարագ վէ սիմ մէճիտիյէ վիրիլմէզսէ փիյասա ֆիյաթը իլէ պիլ հիսապ ֆարգը իլէ պէրապէր գայիմէ օլարագ պէր վէճհը փէշին նիզամիյէ խազինէսինտէն իթա գելընմագ շարթը իլէ մահֆուզ նիւմունէսինէ թատպիգան միւպայեա օլունաճագ օնպին թօփ մահուտի ամէրիգանը պէհեր թօփը գերդ իքի ղուրուշա օլարագ թալիպի էօհտէսինտէ օլուպ շուպաթը բումինին եէտինճի փաղար իրթէսի կիւնի գարարը գաթիսի վերիլէճէկինտէն իթա իթմէկէ թալիպ օլանլարըն եէվմը մեզքիւրտէ Տարը Շուրայի ասքերիյէ կէլմէլերի։

1877 Շուպաթ 2

Պապը Սէրասքէրի

—

ԱՌԱՋՆՈՐԴ ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՍԵՐՈՒ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՄԱՐ

Երկասիրեց Մ. Յ. Աղապալեան

—

Այս ամենակարևոր գիտութեան սկզբունքները ժողովրդեան ամէն կարգերուն մէջ տարածող և միանդամայն աղգային վարժարանաց նախնական դասերու յարմար դասագրքի մը պակասութիւնը ի վաղուց անտի զգալի եղած էր։ Ահա այս պակասը լեցուց այս անգամ մեծ. Մկրտիչ էֆ. Աղապալեան երկասիրելով և հրատարակելով սոյն կարևոր մատենիկը որ վերոյիշեալ կրկին նպատակներուն խիստ լաւ կը ծառայէ։

190 երեսէ բաղկացեալ և 33 փորագրեալ դեղեցիկ պատկերներով զարդարուած է։

Կը գտնուի Եէնի-ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2. Ս. Ղ. և Եաղմաճեան դրատունը և ուրիշ դրավաճառաց քով։

Գին 1 ֆրանք։

ՎԻԿՏՈՐ ՀԻՒԳՕ

ԻՄՊԷՌ ԿԱԼԼՈՒԱ

Թարգմանեց Ալֆոնս Աբէլարեան

Կը ծախուի Եէնի ճամի Զիլինկիրլէր ճատտէսի, թիւ 2, Ս. Ղ. և Եաղմաճեան դրատունը և ուրիշ դրավաճառաց քով։

Գին 3 ղրուշ

ԱՌ ԱՐԵԳԱԿՆ

ՄԵԾ ՏՈՒՆ ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԵՂՕՐԷԻՑ

Վ. ԾԱՆՆԻ

Բերա Մեծ փողոց Աղամամի թիւ 77

ԵՒ

Կ. Պոլիս Կամուրջի հրապարակը թիւ 1—2

Եւրոպիոյ առաջին գործարանաց հետ յարաբերութեամբ կապուած, և իւր դեղորէից ընտրութեամբն և գնոց չափաւորութեամբ հրաշակուած։

Միակ մթերանոց անուանի Հ. Նէսթլէ քիմիագէտին շինած Ֆն լաֆրէյն, որոքիրիկ ալբ տղայոց, տկար կազմ ունեցող և հիւանդութենէ ապաքինելոց միակ սննդարար ուտելիքէն համայն Եւրոպիոյ մէջ ընդունուած և ամեն գըլխաւոր բժշկայ հաւանութիւնն ստացած։

Հոն կը գտնուի նաև.

Քոֆիս (հատակի խմորեալ կաթ) որ մեծ համբաւ ունի Եւրոպիոյ մէջ և շատ կը փնտրուի։

Սիւլֆոմ դը Ֆիրնէն, զուտ և մաքուր, Բրէլթիէ, Տիւլօսք, Ժօպսթ և Էվանս Լէդէ ճարտար քիմիագէտներէն պատրաստուած։

Զկան իւղ, զուտ, Ֆրիսթիանայի Բէթէր Մէլէրի գործարանէն եկած։

Եղեբդէ (հինտիպա) խոհոյ, Լուտվիկսպուրկի Հ. Ֆրանք գործարանէն եկած ստամոքսի ուժ տուող և ախորժակ բացող՝, որ հասարակ խահուէի հետ խառնելով՝ գինը մեծապէս կիջեցնէ՝ առանց համն ու հոտը փոխելու։

Արտէսոպական սոպոյց ամեն ժամու մէջ։

Տէ-ժէնէ Ջոբ, մաղերու անվրիպելի ներկ։

PILULES HOLLOWAY

ԴԵՂԱՀԱՏՈՒ ՀՈԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի, և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, նաև ջղային տկարութեան, ուժաթափութեան և տխրութեան համար. կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Սրտի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մ'ունի. արիւնը մաքրելով նոցա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ, և գրգռելով կենսական գործարանները կը զօրացնէ։ Իւր դեղական մեծ ազդեցութեամբը սրտախառնութիւն, կուծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լեցուած կաղեր, գլխի ցաւեր կը վանէ. մարսողութիւնը կը չափաւորի, և մարմինը մաքրուելով բոլոր այն աղտեղութիւններէ՝ որ շատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ, ուժեղ, և բնական դիրքը կդգենու։

ONGUENT HOLLOWAY

ՍՊԵՂԱՆԻ ՀՈԼԼՕՈՒԷԻ

Մորթային հիւանդութիւնք և վերք բուժելու մասին ունեցած պալսամական յատկութեանցը չհաւասարիր բնաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թունաւոր վերքեր, ուռեցք, քաղցկեղ (չիրիփէնչէ), սրունից և ստեանց վերքեր կամ բոլորովին կանցնին և կամ կլաւանան. օգտակար է նաև հարբուխի, հազի՝, սրտի բարտխման, մանաւանդ օդացաւ (եէլ) ըսուած հիւանդութեան։ Իւր կազդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (սըրաճա) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ի՛նչ աստիճան որ ըլլայ՝ կը դիմադրաւէ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և մասնաւորապէս Պահճէ-գափու Թաշ խանի կողմերը Գ. Գասապեանի դեղարանը՝ Նօ. 7՝ կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն տոքթոր Հոլլօուէ ի Լոնտոն Օքսֆորտ փողոց թիւ 555։

ՊԱՏՄԱՆՔ ՓՈՒՆՋԻ

1.—Փունջը ԶՈՐԵՔՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի։

2.—Տարեկան բաժանորդագինն է միայն չորս արծաթ մէճիտ՝ կանխիկ վճարելի թէ՝ մայրաքաղաքիս և իւր արուարձանաց և թէ գաւառաց համար։

3.—Վեց և երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի։

4.—Տեղական ու գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ։

5.—Հատը 40 փարայ է, և կը գտնուի ամեն Հայ դրավաճառաց խանութները և ձեռքէ ծախողներու քով։

6.—Ծանուցման տողը 3 ղրուշ է մէկ անգամի համար։ Աւելի աժան կըլլայ աւելի անդամներու համար։

7.—Խմբագրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի առ Տնօրէն-Տէր Հ. Ս. Ալճաճեան, Կ. Պոլիս Ալճա-Համամ Խալիլ խան մէջին յարկ թիւ 19։

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ

Հ. Ս. ԱԼՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ս. Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ
Բիզա փաշա խան թիւ 3